

ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ
ՅԱՌԱՋ ԲԵՐԱԾ ՑԱՒԵՐԸ

ԵՒ

ԱՆՈՆՑ ԴԱՐՄԱՆԸ



ԸՆՉԱՆԱՆ
ԱՌԱՋԱՀԱԳԱՎԱԼՈՒՔԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՏԻԳՐԱՆ Գ. ՊԱՊԻԿԵԱՆ

ԵՐԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1918

613
Դ - 23

613
7-23

19 AUG 2006

20 JUL 2011

ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ
ՅԱՌԱՋ ԲԵՐԱԾ ՑԱԽԵՐԸ

ԵՒ

ԱՆՈՆՑ ԴԱՐՄԱՆԸ



ԸՆԹԱՎԱՐԴԻ
ԱՋՋԱՋԱՋԱՎԱԼՈՒԹԵՐՆ

ՀԵՂԻՆԱԿԻ

ՏԻԳՐԱՆ Գ. ՊԱՐԻԿԵԱՆ

ԵՐԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1918

17 JUL 2013



Софроний Григорьевич



3357-87

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԿԵՂԾԻՔՆ ու խարեսայութիւնը, նախապաշտումներ ու առասպելներ կախարդութեան սեւ արուեստին անբաժան ընկերներն եղած են՝ իր ամբողջ անցեալ հինգ հազար տարուայ պատմութեան ընթացքին։ Այս երկարատեւ ժամանակամիջոցին երբեմն ճշմարիտ գրութիւններ լոյս տեսած են, բայց դժբաղվաբար մարդկութեան ու արդարութեան դաւդիր թշնամիներն զանոնք կրկին ու կրկին այրելով իրականութեան հետքը ամբողջովին չնշած են։ Կախարդութիւնը, մարդկութեան մտաւորական ու ֆիզիքական առողջութեան հինգհազարամեայ թշնամին, այսպէս զանազան կեղծուպատիր ձեւերու տակ իր գոյութիւնը շարունակելով՝ այսօր աւելի քան երբէք ապականած է ընդհանուր աշխարհը։ Զակայ ազգ մը որ կախարդութենէ առաւել կամ նուազ ազդուած չ'ըլլայ. եւ բուն իսկ երկար ժամանակի միջոցին շատ մազգեր անով ապասերած ու կործանած են։ Ներկայիս ալ Գերմանիան ամբողջ աշխարհի դէմ միաժամանակ կախարդական պատերազմ մ'ալ կը մզէ, որը կարծես յամառաբար որոշած է շարունակել մինչեւ Գերմաններ եւ Գերմաննեցուկներ աշխարհէս վերնան։ Մանաւանդ անդիտակից ու անկազմակերպ ազգերու ու ցեղերու համար ահապին պատուհաս մը դարձած է ան. այսօրուայ Ռուսիան միակ զոհը չէ Գերման Ստորերկրեայ Բանակին կողմէ կիրարկուած արտաքին-ներքին քաղաքականութեան եւ մտաւորական ու ֆի-

COPYRIGHT 1918
BY
D. K. BABIGIAN

զիքական ախտաւորման ու քայքայման համար ի դործ գրուած ոճրագործական եղանակներուն : Այնպէս որ՝ ներկայիս ազգ մը ուղիղ հիման վրայ զնելու համար նախապէս անհրաժեշտ է զայն թէ պաշտպանողական՝ ու թէ յարձակողական, կազմակերպեալ, թէ բնական եւ թէ անբնական միջոցներով պատսպարել նախապէս կախարդութեան ամէն մանրամասն գործունէութեան դէմ : Անդդիոյ կամ Ամերիկայի իրը մէծ ազգ յաջողութեան գաղտնիքներէն կարեւորագոյնը այդ է եղած . այլ յետամնաց աղբեր ալ իրենց անյաջողութեան իրը կարեւոր հիմնակէտ մը կրնան մատնանշել իրենց կախարդութեան հանդէս բռնած տղէտ, նախապաշարեալ, ու անկազմէ կերպ տրամադրութիւնը :

Ոմանք գուցէ անդիտակցօրէն փորձուին քննադատել մեր այս երկը՝ այլեւայլ ունայն պատճառներով : Ուստի հարկ է հոս կանխաւ զգուշացնել ընթերցողները՝ թէ դժբաղդաբար ասկէ առաջ կա . խարդութեան մասին Հայերէն լեզուով ուեէ իրական ու վստահելի . հրատարակութիւն մը չէ եղած . թէ Հայեր մաքուր բնական ազգ մ'եղած են ու կախարդներ չունենալով՝ կախարդութեան վրայ ալ ցարդ ուեէ ստոյդ գիտակցութիւն չեն գոյացուցած, թէ կախարդութիւնը մինչեւ զրքիս հրատարակութը Հայերուս համար ամէնաթագուն արուեստ մը մնացած է — այնպէս որ, այն որ կը յաւակնի հեղինակը քննադատել՝ պէտք է նախապէս ուշադրութեամբ կարդայ ու ըմբռնէ թէ կախարդութիւնը իր իսկութեան մէջ ի՞նչ է, որպէսզի այնուհետեւ կարենայ զաղափար մը կազմել թէ ինչի՞ վրայ կը խօսի :

Կախարդութիւնը, ինչպէս ըսի, այսօր աւելի աշխարհականացած է քան երթէք . բայց պէտք է դիտել որ անոր կեղծիքներն ալ աւելի զարգացած են, այնպէս որ հարիւրաւոր տարբեր անուններու ու ձեւերու տակ — ինչպէս՝ Դելէփաթհի, Զիփնօթիզմ կամ Քնէածութիւն, Մակնէդիզմ, Մտայառութիւն, Ողէհարձութիւն, Մեսմերականութիւն, Օկլուդ-դիկ գիտութիւններ, Սեւ Արուեստներ, Մեռելա-հարցութիւնն, Բազզահարցութիւն, Վհուկութիւն, Մոգութիւն, Հմայութիւն, Անտեսաննելի Արուեստներ, Մտաթելադրութիւն, Մտային կամ Գաղտնի կամ Եղեռնական Լրտեսութիւն, եւայլն, եւայլն,— կայ ու կը մնայ միայն մէկ իսկական զաղտնիք՝ կախարդութիւն : Ներկայիս դժուար է գտնել անհատ մը, որուն կեանքը կախարդութեան ազգեցութիւններէն ամբողջովին զերծ ըլլայ . հետեւաբար ամէն անհատ պէտք ունի զայն զգուշութեամբ սերտելու : Ոմանք գուցէ առարկեն որ այսպիսի անբընական կամ անորմալ խնդիր մը զննելը մարդուց պարզ ու բնական խորհելակերպին տարօրինակ երեւնայ : Իրական էոր եթէ զաղտնիքը ըսկիզբէն պարզուած ըլլար իր իսկութեան մէջ՝ այլեւս ուեէ դժուարութիւն պիտի չ, մնար . բայց, դըժրագուարար, ինչպէս վերը յիշեցինք, անցեալին մէջ խնդիրը իր պարզ ու իրական վիճակին մէջ հասարակութեան ներկայացնող զիրք մը չենք ունեցած, եւ մի քանի կտոր զբքերն ալ որ ցարդ Հայերէնով հրապարակ ելած են՝ փոխանակ իրականութիւնը չօշափելու, կախարդութեան չուրջ մութնախապաշարումներու, կեղծիքներու, ու առասպելներու արտայայտումը եղած են, գուցէ անդիտակ-

ցարար :

Գոհ սրտով կուգամ յայտարարել որ այսօր այլ-
եւս ամէն ինչ պարզ ու յատակ է — կախարդութիւնն
է զրեթէ այնքան դիւրըմբռւնելի ու այնքան ան-
վերիպելի, որքան անթել հեռագրի գիւտը : Միակ
գաղտնիքը այն է, որ կախարդութիւնը ելեքտրակա-
նուրիւն է — անքել մոտային կամ ներվային ելեք-
տրականուրիւն, ու մասնաւորաբար անով չարիք
կամ ոճիր զործելու արուեստը : Մտային էլեքտրա-
կանութեան իրական անուռնն է Նիւր Ելեկտրօն
այսինքն Ներվային Ելեքտրականութիւն : Նիւրե-
լեկտրօնը կը գործածուի միայն երկու ուղղութիւն-
ներով՝ բարի ու չար, օգտակար եւ վնասակար, բու-
ժիչ ու կործանիչ — դրական ու բացասական : Բա-
ցասական Նիւրելեկտրօնն է որ սկիզբէն ի վեր
ձանչցուած է կախարդութիւն անունով : Դրական
Նիւրելեկտրօնն ալ ներկայիս շատ մանուներով
կը ձանչցուի, բայց հասարակօրէն կը կոչուի Մագ-
նիդիոլ կամ մտամագնիսականուրիւն : Հայերէն
կախարդ բառը Երբայեցերէն Խասափ բառէն առնը-
ւած է : Անթել հեռագրին ու Նիւրելեկտրօնին հիմ-
նական տարբերութիւնը այն է որ առաջինը առար-
կայական Ելեքտրականութիւն է, այսինքն քանի մը
տարբեր առարկաներէ շինուած Ելեկտրական մե-
քենայ մ'է . իսկ վերջինը մարդկային Ելեքտրակա-
նութիւնն է, բուև իսկ մարդու մը աչքերուն ու ա-
նոնց ետև գոնուող ներքին ներվային գործարան-
ներուն Ելեքտրական մէքենան է : Սակայն անթել հե-
ռագրիը զեռ քանիմը տարիներու արտադրութիւնն է,
մինչեւ Նիւրելեկտրօնը հինդ հազար տարիներու
միջոցին գործածուելով ու դարդանալով ահա-

գին գործունէութեան աշխարհ մ'ստեղծած է, ու
բազմատարար ունի հազարապատիկ առաւելու-
թիւն իր անառկայական սահմանին մէջ : Ասոնց
երկուքն ալ առանց թելի կամ օդային թելով մը
երկվայրկեանօրէն կը հազորդակցին օդին մէջն ու
անորոշ հեռաւորութեամբ . անթելը իրը առարկայ
կը հազորդակցի ուրիշ անթել կայանի մը հետ,
մինչ Մտային Անթելը առարկայի չկրնար թափան-
ցել՝ այլ ուրիշ կենդանիի մը կամ մարդու մը ներ-
վային մասերուն—պէտք է զանազանել որ ուրիշ ան-
հատի մը մանաւանդ աչքերը մտային գործիչին հա-
մար կը ծառային իրը ստացողական կայան : Անթելը
լոկ նախորոշ վայրկենական կէտերու ու կոտրուած
գծերու հազորդակցութիւններ կրնայ զրկել դի-
մացի կայանին ու ցարդ անկէ աւելի ոչինչ . Մտային
Անթելը կրնայ զրկել ուղղակի հազորդակցութիւն-
ներ ունէ լեզուով, նոյնպէս մտային միլիոնաւոր
ազգեցութիւններ, պատկերներ, ու չգային կամ ֆի-
զիքական ազգեցութիւններ : Նիւրելեկտրօնը ունի
նաև դիմացինէն քաշելու ու ծծելու ահագին գորու-
թիւն, մինչ Անթելը չկրնար դիմացի կայանէն քա-
շել . առաջինը միայն կը ներզործէ միաժամանակ
մէկ անհատի վրայ, իսկ վերջինը կրնայ գործել քա-
նի մը կայաններու վրայ միանդամային : Կախարդու-
թիւնը միայն հազորդակցութիւն չէ, այլ գաղտնի
ու ոճրագործ զէնք մը մարդուս մտքին ու ֆիզիքին
մանրամասն վիճակներուն ընդդէմ : Անթելին դի-
մացի կայանը եթէ չուզէ կրնայ հազորդակցութիւ-
նը գոցել . բայց կախարդութիւնը իր հազորդակ-
ցութիւնը հաստատելէ վերջ, դիմացի անհատին ա-
ռանց դիտնալուն կամ անոր կամքին ամբողջովին

Հակառակ, իր գործունէութիւնը կրնայ շարունակել անորոշ ու երկարատեւ ժամանակի համար, ենթակային աչքերուն, ականջներուն, գլխին, ողնուղեղին, սրտին, սեռային գործարաններուն, մէջքի ջղային կեդրոններուն, թեւերուն ու ծունդերուն ջիղերուն, եւ այլ մասերուն ուեւէ մէկին կամ մի քանիսին եւ կամ ամբողջին վրայ ձգելով եղեռնական ճնշիչ, տկարացուցիչ, ծծող, ախտաւորող, եւ մինչևսկ մահացուցիչ ազգեցութիւն։ Մօտակայ շրջանակներու մէջ կախարդը եւ կախարդութիւնը իր մէթոտներու եւ կարելլութիւններու զանազանութիւններով ոճիրի ու եղեռնի ահագին ու ընդարձակ գործունէութեան աշխարհ մ'ունի։

Մեր ընթերցողներէն ոմանք պիտի հարցնեն թէ ուրեմն ինչո՞ւ ամէն մարդ ալ կախարդութիւն չկըր նար ընել, քանի որ ամէն անհատ ալ իր գլխին մէջ ու աչքերուն ետին Ներվային Ելեքտրականութեան մեքենայ մ'ունի։ Սխալ չէ. ամէն մարդ ալ ունի այդ մեքենան ու ամէն մարդ ալ կրնայ կախարդութիւն ընել, եթէ իր տեսողական Ելեքտրական մեքենան այդ ուղղութեամբ սկիզբէն մշակէ. ինդիրը միայն այդ մեքենան գործնական գործածութեան մէջ դնելն է։ Եթէ ամէն մարդ իր տեսողական գործարանները Ելեքտրական գործոն մէքենայի մը չէ վերածած՝ բնական է որ Ներվային Ելեքտրականութիւն արտադրելը իրեն տարօրինակ ու անհաւատալի պիտի թուի։ Անթել հեռագիրն ալ հասարակութեան առջեւ ապացուցուելին ու ցուցադրուելին առաջ անհաւատալի կը թուէր. բայց այժմ այն որ Ելեքտրականութենէ կը հասկնայ, ատկէ աւելի պարզ բան մը չկրնար երեւակայել։ Ուրեմն, կա-

խալրուները դպրո՞ց կ'երթան կախարդութիւն սորվելու համար. ընդհանրապէս կախարդներու մեծ մասին ծնողքը, արիւնը, ու սերունդը կախարդ են, ու իրենք պղտիկուց գաղտնի կերպով կը սորվին զայն իրենց ծնողքէն կամ ազգականներէն — օրինակի համար Հրէաները, որոնք ամբողջ ցեղով կանակի համար են. անոնք որ իրենց ծնողքէն կամ ազգականներէն չեն սորվիր, գիտցողներու անձնական ու ելեքտրական առաջնորդութեամբ կ'ուսանին զայն. ու ասոնց առաջին պայմանը բերանացի, գրաւոր, կամ ուեւէ արտաքին նշան կամ խոստովանութիւն չտալն է, որպէսզի չըլլայ թէ իրենց գաղտնիքը երեւան ելլէ, գլխաւորաբար անոր համար որ իրենց կախարդութիւն ընելը ուրիշի մը չընելէն կախեալ է։ Ես Գերման Հրէայ մը տեսայ մասն անգամ՝ ինք ինձ մէկ միլիոն տոլար կ'տար։ Զ'կայ աշխարհիս մէջ աւելի մեծ ոճիր մը քան կախարդութիւն. բայց կարծես աւելի մեծ ոճիր մ'ալ որ կախարդութեան կ'ընկերանայ՝ եղեռնական սուտերու արուեստն է, որով կախարդները կախարդութեան գոյութիւնը չգոյութեան քողին տակ կը պահեն ու իրենց սեւ արուեստները ճերմակ կերպարանքներու տակ կը ծածկին ու հրապարակի վրայ անոր մասին կը խօսին ու կը գրեն ամէն բայց իրողութիւնը։ Հոս պէտք է շեշտել որ, մենք կախարդութիւն չէ որ կը սորվեցնենք, թէեւ երբէք չենք հակառակիր ուեւէ Հայու մը Մտային կամ Ներվային Ելեքտրականութիւն գործածել սորվելուն։

Բայց Նիւրելեկտրօն սորվելէ առաջ մինչիսկ ամէնահական գեր մ'ունինք կատարելու . ինքզինքնիս կը դանենք ահագին թագուն ու անտեսանելի սպառնալիքի մ'առջև . պէտք է աչքերնիս բանանք ու տեսնենք թէ ի՞նչ է այդ սպառնալիքը եւ թէ ի՞նչ կրնանք ընել զայն յաղթելու կամ հիմնապէս ջախջախելու համար : Հետեւաբար, երր կը վերլուծենք կախարդին Ելմքարական մեքենան, մեր նպատակն է հիմնապէս սպարզել իրողութիւնը իր իսկական վիճակին մէջ ու անով սպարասուել զմեղ պաշտպանողական ու յարձակողական առողջ դիրքի մը համար : Տըգիտութիւնը ամէնագլաւառը պատճառն է սոյն աղէտին ուստի պէտք ունինք առողջ, ճշմարիտ դետակցութեան : Անոնք որոնք իրենց նախապաշարեալ ու տղէտ զաղափարով չեն հաւատար թէ կախարդութիւնը կայ ու անընդհատ կը գործէ իր ծածուկ սպառնալիք մը իրենց կեանքին ու գործունէութեան դէմ՝ անոնք կը դիմեն դէպի իրենց գերեզմանը . որովհետեւ նախապէս կախարդութեան չհաւատալով՝ կախարդը պատժելու, արգիլու, եւ կամ սպանելու ալ չեն հաւատար : Երրքու թշնամիդ քեզ կը մօտենայ ու դուն չես տեսներ, քեզ կը զարնէ ու դուն չես արգիլեր — բնականաբար նա քեզ կը մեռցնէ . կախարդը ճիշդ այդպէս կը շարժի . ան կ'ուզէ իր կախարդական զէնքով քեզ սպանել, բայց ան միանդամայն կ'ուզէ անվիճակաւուստ տալ, որպէսզի իր դէնքը յաւիտեան գործածէ . կախարդը Յաւիտենական Մարդասպանն է . եւ անոր փախուստի ամենասառաջին միջոցը քու անոր ոճրագործ գոյութեան չհաւատալու է : Հսելէ որ կախարդութիւն գոյութեան վրայ կասկածողը ու

հակակախարդական պաշտպանողական ու յարձակողական միջոցներու չդիմողը կրնակի մեծ ոճիր մը կը գործէ բուն իսկ իր անձին ու իրեններուն դէմ : Վերջապէս՝ թէեւ կախարդութեան դէմ կախարդութիւն գործածելը յաճախ Անդրիոյ նման մեծ աղիթի մը սկզբունքը եղած է, մենք Հայերս գոնէ մինչեւ նոյնօրինակ սկզբունքը մը գործնականացնելը մեծապէս պէտք ունինք մեր ներկայ կարողութեան սահմանին մէջ գտուող բնական միջոցներու կերպարկման :

Կախարդութեան չուրջ յօրինուած նախապաշարումներու ամբողջ աշխարհ մը կայ, որ մտային ու ֆիզիքական առողջապահութեան հետ սերտ յարաբերութիւն ունի . անցեալ զարելու միջոցին գոյութիւն ունեցան հազարաւոր մութ, հին, ու վերջին ծայր տղէտ նախապաշարումներ . ներկայիս ալկան աւելի զարգացեալ նախապաշարումներ, որոնք աւելի վտանգաւոր կը գանուան : Հայ կեանքին մէջ մուտ գտնող նախապաշարումները գլխաւորաբար երեք մասի կը բաժնուին — մեկնողական, բուժողական, ու կրօնական : Կրօնական նախապաշարումները շատ ընդարձակ ըլլալուն, առանձին հատորով մը միայն կարելի է վերլուծել : Երազի, բաղդի, ու վեճակի նայելու տարրեր տարրեր մէթոսներ կը պատկանին մեկնողական նախապաշարումներու բաժնին : Կախարդներ այս մէթոսներով մարդկութեան ճակատագրին հետ խաղալու ամէնավտանգաւոր հակումներ ստեղծած են սկիզբէն իվեր : Կան բնական երազներ, որոնք բնական հոգեբանական զգայութիւններու հետեւանքն են . միւս կողմէն անբընական երազներն ալ կախարդներու մարդոց աչքե-

բուն վրայ նետած տեսիլներն են — երկուքն ալ ամբողջովին անկախ ոչ թէ միայն իրական արտաքին աշխարհի գործերէն՝ այլ մինչիսկ ամբողջովին անկախ մարդուս իրական խորհուրդներէն։ Հոգեբանական ամբողջական վերլուծում մ'ընելու հոս առիթը չունիմ։ բայց անոնց համար, որոնք մանաւանդ կախարդական ազդեցութիւններու տակ դեռ երազին իրականութեան կը հաւատան՝ ես պիտի ջանամ երկու համառօտ օրինակներ յիշել։ Դեռ անցեալ օրերը, բարեկամի մը հանդիպեցայ, որ ինձ պատմեց թէ՝ ինք նոյն գիշերը գէշ երազ մը տեսած էր, որուն իրը հետեւանք միեւնոյն առտուն, երբ, նոր գործի մը գացած էր՝ մինչեւ կէս օր գործելէ վերջ գործարանէն գուրս վոնտուած էր։ Նախապէս տեղեակ ըլլալով սոյն երիասարդին պարագաներուն՝ արդէն գիտէի որ ինքը շատ մը կախարդական ազդեցութիւններու ենթակայ կ'ըլլար ու թէ մտաւորապէս եւ թէ ֆիզիքապէս շատ անդամ կը տառապէր։ իր միջավայրը Հրէայ, Գերման, ու Այրէշ կախարդներով լեցուն էր, հետեւարար մեր հայրենակիցը մեղադրելի չէր։ իր բնակած սենեակին ճիշդ տակ։ կը բնակէր Գերման-Այրէշ ընտանիք մը, սրոնց մեծ աղջիկը ամէնապժողալի կախարդ սատանայ մ'էր։ Հետապնդելով ես տեղեկացայ որ միեւնոյն կախարդուհին նախորդ օրը մեր հայրենակցին կախարդութեամբ հետեւելով՝ գտած էր անոր աչքերէն, թէ որտեղ գործի գացեր էր։ Ճիշդ նոյն օրը կախարդութեամբ լուր զրկելով այդ գործարանին Գերման Պուխն, թէ մեր Հայ երիասարդը Հայ ըլլալուն համար պէտք էր պատեհութիւն չ'տալ ու անմիջապէհ յուսախար ընել, նոյն գիշերն

իսկ ամէնապէշ երազ մը ձգած էր կախարդութեամբ երիտասարդին աչքերուն վրայ։ Եւ դեռ առտուն ալ անոր միտքը կախարդելով հաւատացուցած էր, որ իր գործը պիտի չ'յաջողի, որովհետեւ գէշ երազ տեսած էր։ Հետեւարար յաջորդ օրը ան գործէն վըռընտուեցաւ Գերման կախարդ լրտեսութեան պատճառաւ։ Եւ այս խեղճ երիտասարդը դեռ կը պնդէր, թէ իր երազը իրականացած էր ու չերմօրէն կ'ուղարէր մեկնողական նախարարման։ Կ'ուղարէր երազի մեկնողական նախարարման։ Բարեկամ մը երազ տեսաւ որ իր եղբայրը, որ հեռաւոր քաղաք մը կը բնակէր, մեծ վտանգի մը ենթարկուած է։ յաջորդ օրը հեռաղիբ մ'ստացաւ որ եղբայրը մեռած էր։ Բարեկամս կը պնդէր թէ՝ թէեւ մեծ գժբաղդութիւն մը պատահած էր։ իր նախագուշակ երազը հաշալի իրողութիւն մը դարձած էր։ Բայց հրաշքներու ամէնէ մեծն ալ զիս վայրիկեան մ'խակ շփոթել չէր կարող։ իրողութիւնը իսկոյն պարզուեցաւ։ բարեկամս կախարդ շրջանակի մը մէջ կ'ապրէր եւ կախարդները գիտէին բուն իսկ իր մտքէն իր անձնական ամէն գաղտնիքներն ու մինչիսկ իր հեռաւոր աղջականին մասին նոյն միջավայրին մէջ բնակող կախարդներէն լուր կ'առնէին, որովհետեւ իր աղջականն ալ գժբաղդաբար գէշ կախարդներու մահացուցիչ ոճրագործութիւններուն զոհ գացած էր։ Եւ բուն իսկ սա վերջինին մահուան իրիկունու, վայրիկենապէս միւս քաղաքի կախարդները լուր զրկած էին տեղական կախարդներուն, այնպէս որ նոյն գիշերը բարեկամիս վրայ գործող կախարդը նոյն ուղղութեամբ գէշ երազ մը ձգած էր անոր աչքերուն վրայ։ այդ էր ամբողջ

գաղտնիքը։ Պիտի հարցուի թէ կախարդները ի՞նչ
կը շահին այսպիսի չարագործ հնարքներով։ Մարդ-
կութեան մտաւորականը երազներու հաւատ ընծա-
յելուն պէս կը կորսնցնէ իր իրապաշտ կարողու-
թիւնները, կ'ստորնանայ, ու ըստ այնմ կը գառնայ
կոյր ու ապիկար գործիք մը կախարդներու ու սա-
տանաներու բազմատեսակ մտային ու ֆիզիական
հալածանքներուն—մարդկութեան խակական առողջ
մտաւորականութիւնը ու բնական տրամաբանու-
թիւնը քայլայելը կախարդութեան դարաւոր հե-
տապնդումն է. անոր ամենամեծ շահերէն մին այդ
է. մարդկութիւնը հազարաւոր տարիներ խաւարին
մէջ խարիսափեցնող սատանաներու թագաւորու-
թեան ամէնամեծ աւերը ընդհանուր մարդկութեան
մտաւորականութեան վրայ կոփկոտելու մէջ կա-
յացած է։ Մեկնողական նախապաշարման բաղդ
նայելու գաղտնիքն ալ ամէնահին ժամանակներէ
մնացած տոքտ սովորութիւն մ'է, որը տեսակ տե-
սակ նոր կերպարանքներու տակ վեռ այսօր ալ կը
շարունակուի մինչխսկ ամէնալուսաւոր երկիրներու
մէջ։ Տեսած եմ հայրենակիցներ, որոնց միտքը ապ-
շեցեալ դրութեան մէջ կը գտնուէլ Հիմնօթիւսնե-
րու ու Բայրիսթներու տուած իրական մեկնութիւն-
ներու առթիւ։ Իրականութիւնը պարզող, գաղտնիք-
ներ կարդացող, միտք ընթերցող կարող գերակա-
տարներ շատ կան մինչխսկ Ամերիկայի զարգացած
քաղաքներուն մէջ — չ'իշելով անշուշտ շատ մը
կեղծ, խարերայ, ու նախապաշարեալ ֆաքիրներ—,
որոնք բուն իսկ քու մտքէդ մտելեքտրականական
միջոցներով կընան հասկնալ քու գաղտնիքներդ ու

կանոնք քեզի ծախել փոքր գումարի մը փոխարէն։
Երբեմն ալ անոնք ըլջակայ կախարդներու հետ կան-
խաւ յարաբերութիւն հաստատած ըլլալով, իրենց
քով մտնելուդ պէս քու ամէն գաղտնիքներդ, ի՞նչ-
պէս որ առաջուց կախարդներէ լրտեսուած են, այն-
պէս կը գնեն քու առջեւ։ Ասոնք միտքդ աւելի եւս
նախապաշարելու համար ձեռքերուդ զծերը կը
կարգան, հիմնոսական ձեռահպումներ կ'ընեն, մի-
տիմներու հաղորդակցութեան կը դիմեն, հայելի
կամ փայլուն առարկաներ կը զործածեն, եւայլն,
եւայլն։ Անցեալի իրական գուշակութիւններէն զատ
ասոնք ապագայ գուշակութիւններ ալ կ'ընեն, ո-
րոնք իրե թէ իրական կը գառնան, որոնք նորէն
կամ կախարդութեան եւ կամ մակնէդիզմի սահմա-
նին մէջ կ'ինան ու իրենց իրազործութիւնը վերո-
յիշեալ երազներուն իրականացման նմանութիւն մը
կը կրեն, լաւ կամ գէ։ Բայց բաղդ նայել տալու
այս նորագոյն գիտական միջոցներն միջնչիսկ նա-
խապաշարումներու աշխարհը կը քաջալերեն, մար-
դոց մաքերը կը նախապաշարէն, ու հետեւարար կա-
խարդութիւնը յառաջ տանելու միջոցներ են որոնցմէ
պէտք է խոյս տալ։ Հ ոս նկատի առնելու է որ աւելի
յաճախ կախարդները բաղդ նայելու եւ մեկնութիւն-
ներ կատարելու համար մասնաւոր միտիումներ, կամ
գիտակցորէն իրենց համար զործով եւ կամ անզի-
տակցօրէն իրենց գաքդիքներուն ենթարկուող ան-
հատներ կը զրկեն ամէն տեղ վերոյիշեալ ուղղու-
թեամբ զործելու. ասոնցմէ շատերը այդ զործը ի-
րենց արեստ ըրտ են ու այդ կերպով շարունակա-
կան առեւտուր կ'ընեն։ Վիճակի, օդային փոփո-
խումներու, աստղերու, եւայլն, նայելու



բութիւնն ալ բաղդատաբար աւելի հին նախապաշարում մ'է բուն իսկ կախարդներէն թելքը ունած: Մարդկութեան յառաջդիմութեան շատ վնասակար եղած են անոնք. մարդիկ այն ատեն յառաջդիմած են, երբ իրենց ճակատագիրը իրենց ձեռքը առնելով իրապաշօրէն իրենց կեանքը բարւոքած են. յետադիմութեան մեծ ազդակներէն մին եղած է վիճակի նայելու տարբեր տարբեր սովորութիւններու դործածութիւնը. զարմանք չէ որ կախարդները զայն ամէն կերպով քաջալերած են: Երազի, բազդի, ու վիճակի նայելու կախարդական մեկնողական նախապաշարումներու ամէնսամեծ մասը սեռային, սիրային, ու ամուսնական խնդիրներու կը պատկանի: Անշուշտ յայտնի է որ ամէն անհատ ալ սկիզբէն իր մտքին մէջ կը կրէ շատ մը նախապաշարումներ հակառակ սեռին հանդէս՝ որոնք կախարդներ նախապէս սերմանած են մթնոլորտին մէջ, եւ որոնք մինչխմկ մուտ գտած են մեր նախորդներուն, մեղ շրջապատող անհատներուն, ու մեր կարդացած գրեթուն ու բոմաններուն մէջ: Իրականութեան մէջ ալ արդէն ամէն անհատ անպատճառ իր անձնական բաժինը կ'ունենայ սեռային խնդիրներու մէջ ուշ կամ կանուխ: Հետեւաբար, թէ նախապաշարումը եւ թէ իրականութիւնը ամէն անհատի հետ ալ քիչ կամ շատ առնչութիւն ունենալուն համար անշուշտ զարմանալի չ'թուիր, թէ ինչո՞ւ կախարդներ, բազդ-նայողներ, հմայողներ, եւայլն, ամէնէ աւելի կը ծանրանան սեռային խնդիրներու վրայ, եւ կը ջանան յաճախ գուշակել ինչ որ արդէն ճշմարիս է ու կը պատահի ամէն անհատի: Կախարդներ ունին շատ մը պատճառներ սեռային խնդիրներ ի-

րենց յաւիտենական նիւթ ընելնուն համար. բաւ է յիշել որ կախարդութեան ոճիքը մարդոց մէջ քաջալերելու ամէնանպաստաւոր պայմաններէն մին ալ գուշակութեան այս արուեստը եղած է, որուն հաւատացողներ իրենց ճակատագիրը կը ծախեն կախարդներու թագաւորութեան, եւ այնպէս միջոց կ'ստեղծեն, որպէսզի կախարդներ իրենց սուրբ ու նուրիսական մտքերուն, ֆիզիքներուն, ու անհատական գործերուն ձեռնմուխ ըլլան:

Կախարդութեան երեւան բերած բուժողական նախապաշարումներու հին ձեւերն ալ բժշկական դաստիարակութեան մեծաքայլ յառաջցման ըլնորհիւ այսօր գրեթէ անհետացած ըլլալով՝ ներկայիս ալ կախարդներ բժշկութեան մէջ սողոսկած են նոր բայց աւելի եղեննական մէթոսներով: Անոնք բուն իսկ իրենց կախարդ բժշկապետներու ըլնորհիւ մինչխմկ յաջողած են սողոսկիլ բժշկական գոլրոցներու, բժշկական գրքերու, բժշկական վարժութիւններու յատկացուած հիւանդանոցներու, ու վերջապէս բժշկական գործնական կեանքի ամէն մանրամասնութիւններուն մէջ: Այդ է պատճառը, ուրեմն՝ որ մինչխմկ Ամերիկայի մէջ հիւանդներու, ախտաւորածներու, տկարներու, ու ցաւագարներու թիւը միշտ աւելցած է բժիշկներու թիւին յաւելման ուղղակի համեմատութեամբ. իրօք, որքան շատ բժիշկ կայ, այնքան ալ շատ հիւանդ կայ: Անշուշտ ես չեմ կրնար մեղադրել կամ մինչխմկ չ'գնահատել ուղղամիտ ու ողջախոհ բժիշկներ ու վիրաբուժներ, որոնք մարդկային ընդհանուր կենցաղին մէջ երեւան բերած են մեծ յեղաշրջումի ու բարոքման շրջան մը — բայց իմ գործնական փորձա-

ոռութեանս միջոցին ես նկատած եմ որ բժշկութեան արուեստը առանց կախարդական ցաւերու եւ անոնց հիմնական ու բացարձակ դարմաններու գիտութեան շատ թերի մնացած է եւ մինչիւ յաճախ ահապին պատուհաս մը դարձած է ընդհանուրին համար : Անոր համար է որ շատ մը հիւանդութիւններ որքան որ բժիշկը վստահեցնէ՝ երկար տարիներ ենթական կը տառապեցնեն, կամ բնաւ չեն բուժուիր եւ կամ մահուան պատճառ կ'ըլլան : Որովհետեւ երբ կախարդը անհատի մը արտաքինէն կը ներգործէ ուեւէ տկարութիւն, պարզ ու ակնյայնի եղելութիւն մ'է, որ ամբողջ գեղարանի գեղերն ալ կլելու ըլլայ՝ անոնցմէ բնաւ չօգտուելէն զատ, իր ներքին սիսթէմն ալ պիտի վտանգէ : Եթէ ցաւը բնական կամ ներքին ցաւ մ'ըլլայ՝ տրամաբանական է որ տօքթօրին գեղագրութիւնը կ'օգնէ . բայց եթէ ան անբնական կամ արտաքին կախարդական միջոցներու կիրարկման արդիւնք է, ի՞նչպէս կարելի է հիւանդը բուժել, կամ թէ-ինչպէս յաճախ կը պատահի-եթէ հիւանդը ներքին բնական ցաւ մ'ունի, որուն վրայ կախարդն ալ արտաքինէն գործելով զայն բընական ու անբնական խառնուրդ մը կը դարձնէ՝ կարելի՞ է զայն բուժել առանց թէ ներքին գեղային միջոցներով ու թէ արտաքին հակակախարդական դարմանումով : Բժիշկներու անդիտակ ու անկեղծ դասակարդը բնականաբար պիտի ջանայ պնդել որ, ինք կախարդութեան չհաւատար, թէ կախարդութիւնը հին դարերու նախապաշտում մ'է, թէ ամէն ցաւ կամ տկարութիւն ներքին իրական պատճառ մ'ունի՝ որը պէտք է ներսէն դեղ տալով դարմանել — բնականաբար այսպիսի բժիշկներու հա-

մար այս գիրքը մեծ օդտակարութիւն կրնայ ունենալ . եթէ իրենք չեն գիտեր թէ կախարդութիւն կայ ու մանաւանդ կախարդ շրջանակներու մէջ ցաւերու կարեւոր մասը անկէ յառաջ կուգայ՝ կը յուսանք թէ մեր այս ձեռնարկը իրենց համար շատ նպաստաւոր առիթ մը պիտի ընծայէ . եւ եթէ գրքին համառօտութեան պատճառաւ հոն կարելի չէ այս անգամ աւելի երկար մանրամասնութիւններ գրել՝ ես շատ ուրախութեամբ պիտի պատասխանեմ իրենց անհատական հարցումներուն : Խօսքս գլխաւորաբար Հայ բժիշկներու համար է, որոնցմէ շատերը արդէն ես անձնապէս կը ճանչնամ ու գիտեմ թէ իրենք որքան անկեղծ են՝ թէ եւ կախարդութեան մասին անդիտակից : Գալով Ամերիկայի եւ ընդհանուր աշխարհի կախարդ ու խարդախ բժիշկներուն՝ որոնք մէկ կողմէն կախարդներու բանակներ կը վարձեն ու սատանաներու հետ սակարկութիւններ կ'ընեն իրենց մեծաքանակ յաճախորդ հիւանդներ արտադրելու եւ միւս կողմէն մարդոց կեանքն ու դրամը կողոպտելով աւագակութեամբ, ոճրագործութեամբ, մարդասպանութեամբ, ու խեղճերու արիւնը ծծելով իրենց թէ սատանայական ոճրագործ ոգիին մարդկութեան արիւնի ծարաւին յագուրդ կուտան եւ թէ փորերնին մամոնայով կը պարարտացնեն — անոնց ալ մասին թող սորվին իրականութիւնը անոնք որոնք գեռ փորձառութիւնը չեն ունեցած : Հոս կըկին պէտք է չեցտել որ այս դասակարգի բժիշկներուն մի կարեւոր մասը Գերմաններ, Հրէաներ, ու Այրիշներ են, որոնք կը պատկանին Գերման ստորերկրեայ բանակին : Շատ մը հիւանդանոցներ — մանաւանդ նահանդային հիւանդանոցներ — ալ կան

որոնք այս կախարդ դասակարգի բժիշկներով ու գործաւորներով կը կառավարուին իբր եղենական սպանդանոցներ :

Գրբոյկիս մէջ ամփոփւած իրական ու գործական փորձերը ու անոնց վերլուծումները զգուշութեամբ կարդացող մեր հայրենակիցները անշուշտ բնաւ պիտի չ'չփոթեն թէ կախարդին կամ կախարդութեան իսկական ինքնութիւնը ի՞նչ է, քանի որ կախարդներ նախ իրենց անձերուն եւ ապա իրենց գործածած կախարդութեան ծպառումին համար անխընայ կը յերիւրեն զանազան կեղծ փոխանորդներ ու կեղծ ներկայացումներ : Կախարդները պէտք է զանազաննել իրենց դաւադիր մտային ազդեցութիւններուն զոհ գացող կախարդուած անհատներէ, որոնք յաճախ հրապարակ կ'ելլեն տարբեր տարբեր կախարդական պատգամներ կատարելուու : Ասոնցմէ ոմանք ինքինքնին հիփինօթիզմի, քնչածութեան, կամ մակնէթիզմի կատարելազործեալ ուսուցիչներ կամ հեղինակութիւններ կը ներկայացնեն՝ մինչդեռ իրենք ոչ կարող են Մտային Ելեկտրականութիւն կիրարկել, ոչ ալ զիտեն թէ Մտային Ելեկտրականութիւնը իր օգտակար գործունէութեան մէջ կամ անոր ոճագործական եղանակը, որ կախարդութիւն է, ի՞նչ է . իրենք լոկ կոյր գործիք մը կամ գործիքի մը գործիքը գարձած են՝ յաճախ առանց իրենց կասկածելուն : Ես անձնապէս տեսնուեցայ Հայու մը հետ, որ երկար ատենէ ի վեր հիփինօթիզմի կամ քնչածութեան կամ մտայառութեան արուեստը կը սորվեցնէր՝ թէ անձամբ եւ թէ գրքի միջոցաւ . իրեն հետ տեսակցելու պարագային, ան ինձ յայտնեց թէ՝ ինք իր արուեստը նիւ Եորք գտնուող

դպրոցի մը մէջ ուսած ու վկայական ստացած էր . թէ ինք շատեր բուժած էր, շատերու ալ իր արուեստը սորվեցուցած էր . թէ մինչիսկ կրնար գաղտնիքներու թափանցել ու թելագրութիւններ ընել, եւայլն, եւայլն : Գործնական ըլլալու համար ես անմիջապէս առաջարկեցի որ իմ վրայ փորձէ իր կարողութիւնը . կէս ժամ ես կանգնեցայ իր հետ առանձին սենեակի մը մէջ, ու ինք դարձաւ ետեւս ու առջեւս, ձեռները շարժեց գլխիս շուրջ, բերանացի թելագրութիւններ ըրաւ աչքս բանալու, գոցելու, եւայլն . վերջապէս ինձ ըսաւ թէ՝ ես իր ազգեցութեան տակ ահա՛ քնացայ, ահա՛ քնացայ : Երբ իր գործունէութիւնը լմնցուց՝ հարցուցի թէ կըրցա՞ւ մազի չափ ազգել իմ վրայ — ան ապշած յայտարարեց որ չկրցաւ : Անշուշտ երկու կողմէն ալ յիմարի դեր մ'էր որ կը կատարուէր — ուր ես կամաւորապէս ինքինքս այդ ամէնաապուշ վիճակին ենթարկելու տրամադրած էր՝ լոկ փորձի համար : Դերակատարը նստաւ յուսահատ ու գիտակից իր կեղծ դերին մատնուելուն : Ան չէր գիտեր մինչիսկ թէ հիփինօթիզմը իրականութեան մէջ ի՞նչ է — լոկ կոյր ու յիմար գործիք մը դարձած էր կախարդներուն ու չէր զգար որ ինքը խղճալիօրէն խարուած էր եւ ինքն ալ փոխագարձօրէն կը խարէր : Բնականաբար դպրոցին մէջ իրեն սորվեցուցած էին հիփինօթիզմի զազրելի կեղծիքն ու խարերայութիւնը — եւ ուրիշ ոչինչ . ինք ամբողջովին զուրկ էր Մտային Ելեկտրականութիւն կիրարկելու կարողութենէն ու անձամբ մազի չափ չէր կրնար ազգել : Պէտք է գիտել որ միակ գաղտնիքը աչքերուն ու անոնց ետին գտնուող գործարաններուն ելեկտրական զօրութիւն

արտադրելն է — ու ձեռքերու գործածութիւնը, բերանացի թելազրութիւնները, եւ մտքէն ու աչքերէն գուրս գտնուող ամէն տեսակ արտաքին բանաձեւ կամ զեղագիր բացարձակ կեղծիք ու խարեւայութիւն են: Երբեմն կախարդներ այս տեսակ Հիսինոթիսթի թելազրած պահուն, անոր թելազրութիւններուն համաձայն, ենթակային վրայ կը գործէն, ու ենթական այդ զօրութիւնը կը վերագրէ Հիփինոթիսթին. կախարդներ այլպէսով թէ Հիփինոթիսթը կը խարձն և թէ ենթական, եւ թէ միեւնոյն ժամանակ ասոնցմով ալ տակաւին ուրիշներ կը խարձն: Նոյնպէս հրապարակին վրայ մհճ թուով գրքեր կան՝ Անգլիերէն, Յիրանսերէն ու մինչխոկ քանի հատ ալ Հայերէն՝ որոնք միայն վերոյիշեալ գտակարդի կախարդներու կեղծ գերակատար-գործիք ներուն վտանգաւոր արտազրութիւններն են: Կախարդուած գերակատարներու տեսակները այնքան շատ են որ հոս կարելի չէ մանրամասն յիշել: Հոս պէտք չէ զանց առնել կախարդուած կրօնական կամ քաղաքական գերակատարներ, ինչպէս Շասրութինի գերը թուուիս ներքին քայլայման, ինչպէս նաև սօցիսլիսդ աղանդին կործանարար գերը հոն եւ ամէն ազգի մէջ: Քանի մը այսպիսի գործիքներ ալ տեսած եմ, որոնք թէեւ անկեղծ են՝ կախարդութեան մասին վերջին ծայր տպէտ են, ու մինչխոկ կախարդներու աղգեցութեան տակ կը թելազրեն տարբեր տարբեր միջոցներ, մասնաւոր կախարդական ցաւերէ բուժուելու կամ մասնաւոր գաղտնի խնդիրներ կարգադրելու համար. տակաւին ուրիշներ ալ գուշակութիւններ կ'ընեն, ողիներու հետ յարաբերութեան մէջ կը մանեն, սատանաներու հետ

սակարկութիւններ կ'ընեն, եւայլն եւայլն: Ասոնք բացարձակ կեղծիքներ են: Կախարդներ մարդիկ շահագործելու ու զանոնք իրենց զիւային քմահամոյք-ներուն ստրուկ խաղալիքներ դարձնելու համար, այսպէս զիրենք հովանաւորող անհատներ, գործիքներ, ու առարկաներ կը նշանակեն: Կախարդներ ոչ քէ միայն յախտենական եղենական ոնքագործներ են, այլ նաև յախտենական եղենական ստախուներ: Կախարդներ անձնապէս արտաքինին մէջ ինքինքնին իրենց ներքինին ճիշդ հակառակը կը ներկայացնեն եւ իրենց բերանով ալ կը խօսին զանազան եղենական սուտեր: Շատ կախարդներ քեզ կը կախարդներ ու մինչխոկ զեեզ կախարդ կը կոչեն, կը ստեն ու քեզ ստախօս կ'անուանեն, վրադ ոճիր կը գործեն ու զեեզ ոճրագործ կը ներկայացնեն: Աղջիկ կախարդներ, որոնք թուով ամէնէ շատ են, յաձախ քեզի կախարդութիւն ընելու պարագային, արտաքինէն սիրահարութիւն կը կեղծեն, սատանայօրէն կը գործեն ու հրեշտակ կը ձեւանան, արիւնդ կը ծծեն ու քու ամէնաբարեսիրոտ բարեկամդ ըլլալ կը կեղծեն, եւայլն, եւայլն: Այսինքն՝ կախարդը, որքան ատեն որ մարդիկ տպէտ են ու բացարձակ մէջոցներով ինքինքնին չեն պաշտպաներ ու կրկին աչքերնին բանալով զիրենք ըրջապատող կախարդները կամ Անտեսանելի Մարդասպանները տեսանելի դարձնելով ու իրը կախարդներ զանազանելով չեն սպաներ եւ բնաջնջեր, կամ գոնէ անոնց զէմ սպանացող զօրաւոր զիրք մը չեն բռներ, անոնք կը սպանեն իրենց մարդկութեան վրայ ինքնակոչօրէն ստանձնած Յաւիտենական Ոճրագործներու գերը, եւ ինչ ալ ընես, նորէն կը շարունակեն՝

Հնազանդ իրենց յաւիտենական մարդկային
քայլայումի օրէնքին — որով հինգ հազար տարի-
ներէ ի վեր կը փառաւորուի Սատանաներու ու Դը-
ժոխիքի թագաւորութիւնը։ Կախարդներու Եղեռ-
նական, կեղծ, ու նենդ հետապնդումները, հետեւա-
րար, կը պատկանին իրենց ոտքին տակ թաւալող
ու իրենց ստորին պայմաններուն գլուխ ծողզ
մարդ-գերիներուն։ Կեղծիքներու ու նախապաշա-
րումներու վաղեմի հանգրուանը միանդամ ընդմիջու-
կը ցնդի, երբ ճշմարտութիւնը հիմնովին կ'ենթար-
կուի ընդհանուրին գիտակցութեան։ Այնպէս որ,
կախարդութեան ու կախարդներու հիմնական
դաշտնիքները ներկայ իրապաշտ գիտութեան փոր-
ձերուն համեմատ վերլուծելով ու պաշտպանողա-
կան ու յարձակողական հիմնական, բացարձակ ու
դորձնական մէթոսներու կիրարկումը ժողովրդա-
կանացնելով, մենք վստահ ենք որ կը կատարենք
Դարաւոր Ոճիրը իր կեղծիքներով ու նախապաշա-
րումներով հիմնապէս թօթափելու ու իրապաշտ
կեանքի նոր ու անվրիպելի պայմանները հաստատե-
լու էական դեր մը։

ՏԻԳՐԱՆ Գ. ՊԱՊԻԿԵԱՆ

Փետրուար, 1918
7771 Broadway,
Cleveland, Ohio

ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՄԱԶ ԲԵԲԱԾ ՑՈՒԵԲԻ
ԵՒ ԱՆՈՆՑ ԴԱՐՄԱՆԲ

ԸՆԴԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ Ա. ԳԼՈՒԽ

ՆԱԽԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Կախարդութեան պատճառած հիւանդութիւն-
ներն ու տկարութիւնները այնքան յաճախագէպ ե-
ղած են Ամերիկայի մէջ — ինչպէս նաև Կովկասի,
Կ. Պոլսոյ, Եղիպատոսի եւ Պարսկաստանի մէջ — որ
Ամերիկահայ գաղութին ամէն մէկ անդամը պէտք է
ամէն բանէ առաջ ուշադրութեամբ սերուէ այդ խըն-
դիրը ու գործադրէ պաշտպանողական միջոցներ։
Նեւ Եռքէն մինչեւ Սան Ֆրանսիսկօ կախարդութենէ
զերծ միջավայր մը կարելի չէ գտնել միլուններով
կախարդներ գիշեր ցերեկ կը գործեն երկրին մէջ եւ
ամէն կողմ. ու ընդհանրապէս երբեմն վայրեր այն-
քան վարակուած են կախարդութեամբ որ բուն իսկ
այդ պատճառաւ Հայ գաղութը հոս ու հոն այլեւայլ
հիւանդութիւններէ, ջղային տկարութիւններէ, եւ
մտքի ու նկարագրի զանազան ախտերէ սոսկալիօրէն
կը տառապէ՝ մինչդեռ ոչ բժիշկ, ոչ գեղ, ոչ ալ
գիտցուած առողջապահական միջոցներ կ'օգնն։
Ես անձնապէս տեսած եմ հայրենակիցներ, Միաց-
եալ Նահանգներու մէջ ուր որ այցելած եմ, որոնք
առաւել կամ նուազ չափով ենթակայ եղած են կա-

խարդական ախտերու, եւ ուր շատ մը բժիշկներ եւ դեղեր բնաւ չեն օդնած։ Վրքոյկիս մէջ թելադրուած հակակախարդական միջոցները անթերի գործադը-ըողներ առանց բժիշկի ու դեղի անմիջապէս դար-մանուած են ու գիտցած են շարունակել առողջ եւ առաքինի կեանք մը մեր այս ժամանակաւոր պան-դըխտավայրին մէջ։ Կը ցաւիմ որ կարելի չէ հոս դնել լման ցանկը այն անձերուն եւ դաղութիներուն, որոնց ես անձամբ պատեհութիւնը ունեցած եմ այ-ցելու, եւ որոնք օգտուած ըլլալով յարմար առի-թին կ'սպասեն յայտարարել զայն։ Բայց միեւնոյն հայրենակիցներու դրդման վրայ, հարկ կը համա-րիմ հոս հրապարակաւ եւ համառոտարար հրատա-րակել ինչ որ հիմնապէս անհրաժեշտ է ամէնուն համար, նաեւ մէջ բերել քանի մը կարճ յանձնարա-րական վկայութիւններ միայն մի քանի պարզ պա-րագաներու մասին՝ Քիլիկին, Օհայօի Հայ դաղու-թի անձերէն։



ՅԱՆՉՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1

Այս առթիւ կը թելադրեմ ամէն անոնց, որոնք իրենց առողջութեան արժէքը գիտեն՝ որ այլեւս հին մեթուաները անցեալին կը վերաբերին. պաղ ջուրը, լասթիկէ լաթը, կաշէկապը, ու բամբակը մեծ գեր մ'ունին կատարելով՝ գրաւելով արդիսական դեղի ու դարմանի պաշտօնը։ Անշուշտ ես կը յանձ-նարարեմ որ անոնք գործածուին Պրն. Պապիկեանի ցոյց տուած եղանակներով։ Ես անձնապէս քանի Պրն. Պապիկեանի թելարդութեամբ պաղ ջուրով լո-դանք կ'առնեմ, երեսուն փառւնտ աւելցած եմ։ Լեհոն ԴԱՀԹԵԱՆ

7807 Broadway,
Cleveland, O.

2

Լման մէկ տարի ջղային տարօրինակ տկարու-թիւններէ կը տառապէի. սիրս կամ կուրծքս կը տրոփէր շատ գէշ կերպով, կը ցաւէր ու կը խոստ-կոտէր. գլուխս շատ անհանդիստ կ'զգայի, ականջ-ներս կը խօսային եւ ձայներ կը լսէի. ընդհանուր սիսթէմա ալ բաւական տկար կ'զգար։ Շատ մը տար-քեր բժիշկներու գիմեցի, որոնք զիս մասնաւոր գոր-ծիքներով քննեցին ու ցաւին տարբեր տարբեր ջր-դային տկարութեան անուններ տուին, որոնք ես չէի հասկնար. զանազան դեղեր տուին ու ես գործածե-ցի, բայց ոեւէ օգուտ մը չ'տեսայ. վերջապէս հի-ւանդանոց զրկեցին զիս, ուր քանի մը շաբաթ մնա-

լէն վերջ, եւայ առանց օգտուելու. այսպէս, թէ չարչարուեցայ եւ թէ տարի մը գործէս ետ մնացի ու հարիւր յիսունէն մինչեւ երկու հարիւր տալէր ալ բժիշկի ու դեղի վրամ տուի — ամբողջը ի զուր: Պրն. Պապիկեանը օր մը մեր բարեկամներուն տունը եկաւ ու զիս հարցաքննելէ վերջ թելագրեց քանի մը միջոցներ, որոնք ես անմիջապէս գործադրեցի ու հինգ օրէն ամբողջովին առողջացայ: Գործածած միջոցներս ասոնք էին — օրը երեք անգամ պաղ բաղնիք առի ու մարմնիս ազգուած մասերը ուժով շըփեցի. կուրծքիս վրայ հաստ օրաթերթ մը կապեցի՝ վերէն ու վարէն կաչիկ կապերով ամբոցնելով՝ որպէսզի ծակ չ'մնայ, ականջներս ալ բամբակով լաւ մը ամբափակեցի. միայն հինգ օր այսպէս շարունակեցի եւ ամբողջովին ապագինեցայ:

Ես բացարձակ վստահութեամբ կը յանձնարարեմ Պրն. Պապիկեանի գարմանումի միջոցները. եւ եթէ ուեւէ մէկը կը փափաքի՝ պատրաստ եմ անձամբ վկայելու:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԴԱՌԵԱՆ
(Եֆերէկցի)

2210 E. 9th St.,
Cleveland, O.

Բաւական ժամանակէ ի վեր ծունդերուս վրայ տարօրինակ ու ճնշիչ ցաւ մը կ'զգայի, ցաւը ելեկտրականօրէն վարէն վեր կը սողոսկէր ու կարծես ծունդերուս վարի մասերը մէկ մէկ գամ կը զարնէին, ոտքերս չէի կրնար յառաջ առանիլ ու ծունդերս մասամբ կը կծկէին ու կը կապկապէին: Օր մալ երբ

նոյնը պատահեցաւ՝ Պրն. Պապիկեանը չորս համ կաշեկապէր կամ փոկեր բերելով՝ իւրաքանչիւր ծունդիս վրայ երկու հատ, ծնդայօդէն վերն ու վարը, ժիր մը կապեց. ես ըսի որ շատ ժիր չ'քաշէ, բայց ան մտիկ չըրաւ ու ուժով մը կապեց, որմէ յետոյ ծունդերս լաւացան ու նոյն բանը անզամ մ'ալ չ'պատահեցաւ:

ՊԵՏՐՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ

7525 Broadway
Cleveland, O.

Ես սոսկալի գլխացաւ կ'ունենայի ու երբեմն օրերով կը պառկէի, բայց Պրն. Պապիկեանի թելագրած եղանակով բամբակ ու ջուր գործածելով, այժմ շտու լաւացայ:

ԺԻԿ. ԹԱԳՈՒՀԻՉԻ Տ. ԴԱԼԻԹԵԱՆ
7771 Broadway,
Cleveland, O.

Գերմանացի, Հրէայ, ու Այրիշ միջավայրի մը մէջ կը բնակէի քանի մը տարիներէ ի վեր, ու ասոնց կախարդ ըլլալը չ'գիտնալուս՝ կախարդութենէ երկար տառապեցայ: Գիշերները ականջներս կը խօսային ու երբեմն ալ ականջներս կը խոստկոտէին, շատ անզամ զլուխս կը ցաւէր ու կ'ունենայի գլխուպոյոյտ. ընդհանուր ջղային տկարութիւն ունէի. սիրաս ուժգին կը բարախէր. կախարդները ծունդերէս ու թեւերէս ալ ուժու կը քաշէին դուրս. գիշեր-

ները աչքերուս առջեւ մերկ աղջիկներու պատկեր-ներ կը նետէին ու սեռային այլեւայլ գրգռումներ ու հոսումներ կը պատճառէին, որոնք ընդհանուր առողջապահութեանս կը վնասէին. շատ անդամ հետո կարծես կը խօսէին. կախարդ մը Գերմաներէն թէ Հրէայերէն կը խօսէր, որը ես չէի հասկնար, միւս-ներն ալ Անդզիերէն ու Հայերէն կը խօսէին՝ ընդ-հանրապէս սեռային խնդիրներու չուրջ. ես շատ հոգ կ'ընէի, երբեմն ալ վախի ու սարսափի ազգեցու-թիւններով կ'այցելէին: Երկու անդամ բժիշկի դի-մեցի բայց չօգտուեցայ. վերջապէս, Պրն. Պապիկ-եանին թելալրած միջոցները դործածելով, ամբող-ջովին առողջացայ:

ՍԵՐՈԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

3735 E. 77th St.

Cleveland, O.

Տասը օր շարունակ դիշեր ցերեկ կը տանջուէի փորու խոսառուկէ ու ջերմէ, որը բժիշկը նիւմօնիս կոչեց. կերակուր չէի կրնար ուտել եւ փորս շատ պինդ էր. վրաս տաքութիւն կար, զրեթէ անզգայ, մարած ու նուաղած վիճակի մէջ էի. Երկվայրկեա-նական բաղասումներով փորս կը խոստկոտէր, երկ-վայրկեանական ընդմիջումներով կը զարնէր: Տօք-թօրը նայեցաւ, դեղ տուաւ, բայց բանի մը չ'ծառա-յեց: Պրն. Պապիկեանի թելալրութեամբ, այդ ի-րիկունը հաստ օրաթերթ մը կապեցի կուրծքս, յա-ջորդ առառու ոտքի ելայ բաւական լաւացած. յետոյ

պաղ բաղնիք առի ու փորս լաւ մը չփեցի, ականջնե-րըս ալ բամբակով լաւ մը խցեցի: Այսպէս՝ շաբաթէ մը ամբողջովին ապաքինեցայ:

ԻՄԿԵՆՏԵՔ ՍԼՅԱՅԻՐԵԱՆ

8110 Seager St.,

7

Քանի մ'օր առաջ Պրն. Պապիկեանը հասւքոյթի մը մէջ նստած՝ մեր տղայոց առողջապահական թե-լաղբութիւններ կ'ընէր կախարդութենէ ու կախարդ ներէ զգուշանալու մասին ու մասնաւորաբար. կը խրատէր մօտակայ անկիւնի Գերման-Այրիշ խառ-նուրդ ընտանիքի խանութը չ'մտնել, որպէսի տղա-քը չ'կախարդուին: Ես ալ գեռ կախարդութեան մա-սին բան մը չ'գիտնալուս, չ'հաւասարալուս, այդ խա-նութին առեւտուր ընելրուս համար, նոյն կախարդ-ներու ազգեցութեան տակ՝ ջանացի պաշտպանել վերոյիշեալ կախարդները, եւ ըսի ի մէջ այլոց՝ թէ յիշեալ ընտանիքին աղջիկները ճիշդ հրեշտակի կը նմանէին: Յաջորդ իրիկունը քանի մը ժամ քնա-նալէս վերջը, մէկէն ի մէկ արթնցայ որ ոտքէս մին-չեւ գլուխս ջիղերս կծկեր ու կաթուածահարուելու չափ տկարացեր էին. ինքինքս ի զուր ցնցել ջանա-ցի. կախարդական զօրաւոր ճնշում մը կար վրաս ու այնպէս կը կարծէի թէ գլուխս պիտի ճայթէր, թա-ւալգլոր անկողնէս վար ինկայ, ու գլուխը կտրտուած աքաղաղի նման տախտակամածին վրայ գլորեցայ. ճիշդ կաթուածի պէս ազգեր էին վրաս ժամանակ մը այդպէս նուաղ ու անզգայ վիճակի մէջ մնացի: Բա-րեբաղդաբար սենեկիս մէջ ընկեր մ'ունէի, որ ան-

միջապէս օգնութեան հասաւ, ջուր բերաւ, գլուխս թրջեց ու չփեց, եւ ես ատոր վրայ ուշաթափուեցայ. ընկերոջս օգնութեամբ լուսացարան գացի ու գլուխս պազ ջրին տակ քանի մը վայրկեան բռնելով, ձեռքերովս ալ լաւ մը չփեցի, յետոյ գլուխս լաթով մը պինդ կապեցի, որով աչքերս բացուեցան եւ ուժս վրաս եկաւ: Միւս օրը նորէն Պրն. Պապիկեանը տեսնելուս՝ ներողութիւն խնդրեցի: Պրն. Պապիկեան վիճակս հասկնալէն վերջ կրկին միջոցներ թելադրեց ու ես զանոնք գործադրելով ամբողջովին լաւացայ:

ԱԲՐԱՀԱՄ ՊԱՇԱՔՍՈՒԶԵԱՆ

7624 Osage St.,
Cleveland, O.

8

Ընդհանուր առողջութեան կախարդներէ պահպանումը կարեւոր գաղտնիք մէկ ամէն Հայու համար:

Ես անձնապէս թէեւ շատ առողջ եմ՝ Պրն. Պապիկեանի թելադրած միջոցներէն օգտուած եմ ու կրցած եմ առողջապահական ապահով վիճակ միւրացնել:

Մեր հայրենակիցներուն սրտանց կը յանձնարարեմ Պրն. Պապիկեանի առողջապահական միջոցները ու կը յուսամ թէ Հայերս պիտի կրնանք անոնցմով մեր առողջապահական մակարդակը բարձրացնել:

Վ. ՊՈՒԶԱԳՈՅՆ
